

ԴԻՄԱԳՐԱՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱԽԵՐԸ

Դադարի՛ր վախենալուց

Մաս 2

«Լավ օրը լավությամբ անցկացրու, և վատ օրը զգուշություն արա. սրան էլ Աստված նրա կշտին ստեղծեց, որ մարդս իրանից հետո մի բան չգտնի:»
Ժողովող 7:14

1- Ինչո՞ւ ես չեմ մտահոգվում ֆինանսական վիճակի համար

Մատթեոս 6:25-34

❖ Այդ անխոհեմ է

«Մրա համար ասում եմ ձեզ. հոգս մի՛ անեք ձեր կյանքի համար թե ի՞նչ պիտի ուտեք, և ի՞նչ պիտի խմեք. և ո՛չ ձեր մարմնի համար՝ թե ի՞նչ պիտի հագնեք: Չէ՞ որ կյանքը ավելի է կերակուրիցը, և մարմինը՝ հագուստիցը:»
Համար 25

❖ Այդ անբնական է

«Մտիկ արեք երկնքի թռչուններին, որ չեն սերմում, և ոչ էլ հնձում, և ոչ ամբարների մեջ ժողովում, և ձեր երկնավոր Հայրը կերակրում է նրանց. չէ՞ որ դուք նրանցից ավելի լավ եք:» Համար 26

❖ Այդ անօգուտ է

«Հիմա՝ ձեզանից ո՞վ կարող է հոգս անելով իր հասակի վրա մեկ կանգուն ավելացնել:» Համար 27

❖ Այդ անհրաժեշտ չէ

«Բսկ թե որ դաշտի խոտը, որ այսօր կա և էգուց փուռն է գցվում, Աստված այնպես է հազցնում, չէ՞ որ շատ ավելի ձեզ, թերահավատքներ:» Համար 30

❖ Այդ անհավատություն է

«Ուրեմն հոգս մի անեք ասելով, թե՛ Բ՛նչ պիտի ուտենք, կամ ի՛նչ պիտի խմենք, կամ ի՛նչ պիտի հագնենք: Որովհետև այդ ամենքը հեթանոսներն են խնդրում. որովհետև ձեր երկնավոր Հայրը գիտի որ այդ ամենը պետք է ձեզ:» Համար 31-32

«Եվ իմ Աստվածը լրացնի ձեր ամեն կարոտությունն իր հարստության չափովը՝ փառքով Քրիստոս Հիսուսումը:» Փիլիպպեցիս 4:19

2- Պայմաններ, որի դեպքում Աստված պիտի հոգա իմ կարիքները

❖ Եթե Աստծուն տամ առաջին տեղը իմ կյանքում

«Ձեր երկնավոր Հայրը գիտի որ այդ ամենը պետք է ձեզ: Մակայն առաջ Աստծո արքայությունը և նրա արդարությունը խնդրեցեք. և այդ ամենքը կտրվի ձեզ:» Մատթեոս 6:32-33

❖ Եթե աղոթեմ և սպասեմ պատասխանի

«Եթե դուք չար լինելով, գիտեք բարի պարգևներ տալ ձեր որդկանց. որքա՞ն ավելի ձեր Հայրը, որ երկնքումն է, բարիքներ կտա նրանց, որ խնդրում են իրանից:» Մատթեոս 7:11

❖ Եթե հնազանդեմ Աստծո ֆինանսական սկզբունքներին

«Հավատարիմ մարդի օրհնությունները շատ են, բայց հարստանալու շտապողը անպատիժ չի մնալ:» Առակաց 28:20

❖ Եթե գոհանամ ունեցածովս

«Արծաթ սիրողը արծաթից չի կշտանալ, և ոչ էլ հարստություն սիրողը՝ եկամտից...Բարիքները շատանալիս՝ շատանում են նրա ուտողները:»
Ժողովող 5:10-11

«...Բավական համարեցեք այն որ ձեռներումդ ունեք. որովհետև ինքն ասեց, թե Չեմ թողիլ քեզ և երեսից չեմ գցիլ:» Եբրայեցիս 13:5

❖ Եթե սովորություն դարձնեմ հունձքի օրենքը

«Որովհետև սա եմ ասում, թե խնայելով սերմողը, խնայելով էլ կհնձի. և առատությամբ սերմողը, առատությամբ էլ կհնձի: Ամեն մեկն ինչպես որ սրտի հոծարություն կա, ոչ թե տրտմությունով կամ հարկադրությունով. որովհետև Աստված սիրում է ուրախ սովորին: Բայց Աստված կարող է ամեն շնորհքներն ավելացնել ձեզանում. որ ամեն բանի մեջ ամեն ժամանակ ամեն բավականություն ունենալով ամեն բարի գործի համար ավելանաք:» Բ Կորնթացիս 9:6-8

Հաջորդ Քարոզի Թեման
ՀԱՂԹԱՀԱՐԵԼ ՄԵՐԺՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ՎԱԽԸ
Հովիվ Սարո Խաչիկեան